

**ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ՝
«ՇԻՐՄԱՏՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Վերոնշյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա) բարձրագույն կրթություն

բ) հանրային ծառայության առնվազն 5 տարվա ստաժ կամ 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնահավառի առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշման 9-րդ կետով սահմանված պահանջները:

գ) իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն(ՀՀ սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր):

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1. Տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
2. Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն
3. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու կարողություն
4. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման փորձ
5. Ենթականների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
6. Առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

ա) գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),

բ) մեկ լուսանկան 3x4 չափի

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին

դ) ինքնակենսագրություն

ե) Անձնագիր, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները

զ) տեղեկանք մշտական բնակության վայրից

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են Մարգահովիտի համայնքապետարանում, ամենօր, ժամը 9-ից մինչև 18-ը՝ բացի շաբաթ, կիրակի օրերից:

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները: Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև աշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Մարգահովիտի համայնքապետարանի աշխատակազմ (գ.Մարգահովիտ, հեռ.՝ 093-96-88-25):

Մրցույթը կկայանա 2021թ. օգոստոսի 6-ին, ժամը 11.00-ին՝ Մարգահովիտի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2021թ. հուլիսի 22-ը: